ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«13» 01 2020թ.

ՀՐԱՄԱՆ N 4-Ա

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 477-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի «զ» ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2019 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 477-Ա հրամանում կատարել լրացում հետևյալ բովանդակությամբ. «3. Ընկերության կողմից իրականացվող՝ IATA ձմեռային ժամանակահատվածում 2020 թվականի հունվարի 14-ից մինչև 2020 թվականի մարտի 28-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Հռոմ/LIRA/-Երևան /UDYZ/- Հռոմ/LIRA/ երթուղով, 2020 թվականի հունվարի 14-ից մինչև 2020 թվականի մարտի 28-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Միլան/LIME/-Երևան/UDYZ/-Միլան/LIME/ երթուղով և 2020 թվականի մարտի 25-ին 1 (մեկ) չվերթ Բեռլին/EDDB/-Երևան /UDYZ/ - Բեռլին/EDDB/ երթուղով ուղղությունները համապատասխանում են ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով սահմանված չսպասարկված ուղղությունների և չվերթերի հաճախականությունների

պահանջներին, և հետևաբար նշված ուղղություններով մեկնող ուղևորների վրա տարածվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի «զ» ենթակետով սահմանված արտոնությունը: Հաշվի առնելով վերոգրյալը Երևան/UDYZ/- Միլան/LIME/ և Երևան /UDYZ/- Հռոմ/LIRA/ ուղղությունների համար արտոնության տրամադրման սկիզբ սահմանել 2020 թվականի հունվարի 14-ը՝ 36 ամսով, իսկ Երևան /UDYZ/ - Բեռլին/EDDB/ ուղղության համար արտոնության տրամադրման սկիզբ սահմանել 2020 թվականի մարտի 25-ը՝ 36 ամսով: IATA ամառային ժամանակահատվածի մասով արտոնության վերաբերյալ դրույթները կսահմանվեն առանձին հրամանով՝ ավիաընկերության ներկայացվող հայտի հիման վրա:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվությունների տեղադրումը քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:»

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

1/13/2020

X

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

Signed by: REVAZYAN TATEVIK 7201880926